

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

368.4  
F - 63

բներ բուլղար յերկրներ

17/05

Ն. Ի. ԲԻԽՈՎԱԿԻՅ ՅԵՎ Բ. Ն. ԳՈՒՏԵՐՄԱՆ

ԲԱՏՏԱԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԴԻԹՅԱՆ  
ՍԱՄԻՆ  
Ն Ա Ր Ո Ր Ե Ն Ք Է

Փոխադրեց՝ Գ. Հակոբյան

---

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
ՀԱԽՀ ՀԱՆՐԱՊԵՏ. ՍՈՑԱՌԴԱՆԶԱՐԿԴ  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1929

368.4

Գրուեստաբներ Բոլոր յերկրների, միացեք,

Ար

Ն. Ի. ԲԻԽՈՎԱԿԻՅ ՅԵԼ Բ. Ն. ԳՈՒՏԵՐՄԱՆ

ԲԱՏՐԱԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ  
ՆՈՐՈՐԵՆՔԸ

Փոխադրեց՝ Գ. Հակոբյան 12 001

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱԽՆ ՀԱՆՐԱՊԵՏ. ՍՈՑԱՊԳԱՆՁԱՐԿՂԻ  
ՅԵՐԵՎԱՆ — 1929

(15886-52)

2010

## ՀՍԴԱԶԱԲԱՆ

Տասնմեկ տարի սրանից առաջ  
Խորհրդային Իշխանությունը հրատա-  
բակեց որևէք, վորի համաձայն առանց  
բացառության պետք և ապահովագր-  
վեն բոլոր վարձու աշխատավորները:  
Բայց չ'աջողվեց իսկույժն և յիթ այդ  
որենքը կյանքում կիրառել այն քա-  
ղաքացիական պատերազմի պատճա-  
ռով, վորը տարվեց կալվածատերերի  
և հարուստների կողմից ընդդեմ բան-  
վորների և գյուղացիների: Միայն 5  
տարի հետո մենք սկսեցինք քաղաքի  
և խորհրդային տնտեսություններում  
աշխատող բանվորների ապահովագրու-  
թյունը: Բայց բատրակների գլխավոր  
մասը, վորը աշխատում և գյուղացիա-

ՏԵՐՄԵՍ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,  
ՄԱՐՔԻ ՓՈՂ. № 29  
ԳՐԱՄԵԹ. № 1794.թ.  
ՏԵՐԱԺ 5000

29727-Ա.հ.

13841-58

կան տնտեսություններում մինչև այժմ  
ել չի կարողացել ոգտվել ապահո-  
վագրական գանձարկղի ոգնությունից:  
Ինարկե այդ բանը պատահել ե վոչ թե  
նրա համար, վոր Խորհրդային Իշխա-  
նությունը մոռացել ե բատրակների  
ցավերն ու կարիքները: Գլխավոր պատ-  
ճառները յերկուան են՝ առաջին պատ-  
ճառը նա յեր, վոր գյուղացիական  
անտեսությունները դեռ չեյին կարո-  
ղացել ավերածությունից կանոնավո-  
րել ե չեյին կարող իրենց բատրակնե-  
րի համար ապահովագրական մուծանք-  
ներ (տոկոսներ) վճարել: Յերկրորդ  
պատճառը նա յե, վոր բատրակները  
ցիր ու ցան առանձին խոռոշութերում  
են, իսկ ամեն մի գյուղում Սոցազ-  
գանձարկղ բաց անել չի կարելի: Հիմա  
դրությունը լավացել է և գյուղացիակ.

տնտեսությունները զգալի չափով ու-  
ժեղացել են, իսկ քաղաքներում կան  
ապահովագրական գանձարկղներ, վորոնց  
վրա կարելի յե զնել պարտականու-  
թյունը, ապահովագրելու նաև զյուղի  
բատրակներին:

Այս եր, վոր Խորհրդային Իշխա-  
նությանը հնարավորություն տվեց  
հրատարակել բատրակների ապահովա-  
գրության մասին նոր որենքը:

Ինչ ե նոր որենքի եյությունը.—

Այդ որենքով Խորհրդային Իշխա-  
նությունը ուղղում ե բատրակներին  
նրանց կյանքի բոլոր դժվարին որերին  
ոգնության հասնել: Ամեն տեղ ուր  
անց կկացվի այդ որենքը, բատրակը  
կարող ե ստանալ հիվանդության ժա-  
մանակ նպաստ և յեթե նրա հետ աշխա-  
տանքի ժամանակ տեղի ունենա դրժ-

բախտ պատահար (խեղանդամություն), նա կստանա մինչև իր կյանքի վերջը կենացթոշակ: Կստանա կենացթոշակ նաև բատրակի ընտանիքը, յեթե բատրակը մեռել ե դժբախտ պատահարից: Հղի բատրակուհին չի աշխատի մինչև ծննդաբերության որը, վորով նա կստիաթեր թե իրեն և թե իր յերեխային: Նա աշխատանքը կարող ե թողնել ծննդաբերությունից մեկ ամիս առաջ և աշխատանքի կարող ե վերադառնալ ծննդաբերությունից մեկ ամիս հետո, իսկ այդ ամբողջ ժամանակամիջոցի համար նա ողնություն կստանա գանձարկութիւն: Բացի այդ նա կստանա նաև առանձին նպաստ յերեխային շորերունելու համար: Բատրակի մահանալու դեպքում պատահավաքական դանձարկը նրան կատա թաղման նպաստ:

Հրատարակելով նոր որենքը Խորհրդային հշխանությունը մտահոգված ե յեղել նաև գյուղացիության կարիքներով:

Քաղաքում սահմանված են բարձրագանովագրական մուծանքներ (տոկոսներ) մինչև 20-ից ավել կոպեկ 1 ոռւբլի աշխատավարձի համար, իսկ Խորհրդային տնտեսությունների համար 10 կոպեկ:

Գյուղացիության համար այդ մուծանքները (տոկոսները) վորոշված են շատ ցածր: Միայն հարուստ, կուլակային տնտեսությունները պարտավոր են բատրակի ամեն մի ոռւբլի աշխատավարձի համար վճարել 10 – 6 կոպեկ, իսկ միջակ և չքափոք տնտեսությունները (յեթե ինարկե կցանկանան) պետք ե վճարեն ամեն մի ոռւբլի աշ-

իստավարձի համար Յ կոպեկ։ Այս  
փոքրիկ մուծանքի փոխարեն գյուղա-  
ցին աղատվում ե բատրակի վրա իր  
կատարելիք ծախսերից։ Այսինքն այն  
ծախսերից վորը կատարում ե վարձո-  
ղը, յերբ բատրակը հիվանդ ե լինում,  
կամ աշխատանքի ժամանակ տեղի յե-  
ռնենում դժբախտ պատահար և այլն։

Ահա թե ինչ ե տալիս նոր որենքը։  
Դժվար կլինի դա կյանքում կիրա-  
ռել, վորովհեակ ամեն տեղ քաղաքի  
ապահովագրական գանձարկղները այն  
քան չեն ուժեղացել, վորպեսզի կա-  
րողանան կատարել այն աշխատանքը,  
վոր դըել ե նրանց վրա նոր որենքը։  
Այդ պատճառով ե, վոր որենքի մեջ  
ասվում ե թե այդպիսինը միանգամից  
չի կիրառվում, այլ աստիճանաբար և  
առանձին վայրերում։

Ապահովագրական գանձարկղները  
այս որենքը ամբողջ Խորհրդային  
Միության մեջ կարող են տարածել  
միայն այն ժամանակ, յերբ գյուղը  
ձեռք ձեռքի տված համերաշխ կերպով  
ոգնի գանձարկղներին այս կարեոր  
գործը կատարելու համար, դրա համար  
ել բատրակները և գյուղացիները  
ամենից առաջ պետք ե ծանոթանան  
այս որենքի հետ։ Այս գրքույկը այդ  
ասպարեզում նրանց ցույց կտա մեծ  
ոգնություն։

Լ. Նեմչենկո

Աշխատանքի պահանությունը գործարանում յեվ գյուղական տնտեսության մեջ

Բոլորին հայտնի յե, վոր գյուղական բատրակների դրությունը շատ քիչ բանով և տարբերվում քաղաքի բանվորի դրությունից: Թե բատրակը և թե բանվորը բացի իրենց կոշտացած ձեռքերից ուրիշ ապրուստի միջոցներ չունեն: Թե բատրակը և թե բանվորը որեւ ապրում են նրանով, վոր վաճառում են իրենց բանվորական ուժը: Թե քաղաքի բանվորը և թե գյուղի բատրակը միատեսակ վտանգված են անգործ և անյեկամուտ մնալուն, յեթե հանկարծ կորցնեն իրենց

բանվորական ուժը — հիվանդանան կամ ծերանան:

Ինչպես բատրակին, նույնպես և բանվորին միատեսակ սպառնում ե գործազրկությունը, յեթե հանկարծ քաղաքում փակվում ե գործարանը, կամ գյուղում վերջանում ե աշխատանքը:

Նույնպիսի դրության մեջ են ընկնում քաղաքի և գյուղի բանվորների ընտանիքները, բատրակի կամ բանվորի մահից հետո: Թե բատրակի և թե բանվորի մահից հետո մնում են ապրուստի ամեն միջոցից զուրկ կինը և փոքրիկ յերեխաները: Բայց յեթե դիտենք գործարանի և գյուղացիական տնտեսության աշխատանքի պայմանները, այն ժամանակ հեշտ կերպով կնկատենք գործարանային և գյուղի

աշխատանքների մեջ յեղած տարբերությունը:

Գործարանը աշխատում եւ ամառ, ձմեռ—ամբողջ տարի: Գործարանը չի վախենում վոչ ձյունից, վոչ անձրեվից և վոչ ել խավարից: Բան եւ յեթե պետք լինի գործարանը կարող եւ աշխատել որ ու գիշեր: Դրա համար պետք եւ միայն հավաքել ավելի բանվորներ և աշխատացնել նրանց յերեք հերթի:

Այդպես չե դրությունը գյուղացիական տնտեսության մեջ: Այդտեղ ամբողջ աշխատանքը տևում եւ միայն տարին մի քանի ամիս: Այնտեղ պետք եւ լինում աշխատել վոչ այն ժամանակ, յերբ վոր ուղենաս, այլ այն ժամանակ, յերբ վոր պետք եւ յեղանակը թույլ եւ տալիս: Հունձը կամ կալը չես կարող թողնել աշնանը, յերբ վրա

կտան անձրևները: Այդ աշխատանքները ստիպված տանում են շտապով, հաշվի չնստելով ժամերի հետ: Այստեղ արդեն յերեք հերթ չես կարող սահմանել: Դաշտում ելեկտրական լամպ, ինչպես գործարանում չես կարող վառել:

Ահա այս առանձնահատկություններն են, վոր Խորհրդային Իշխանության կողմից հաշվի յեն առնվում, յերբ իշխանությունը գյուղի բատրակների աշխատանքի պաշտպանության մասին որենքներ եւ հրատարակում:

Հաշվի յեն առնվում նաև վարձու աշխատանքի պայմանների տարբերությունը կուլակային (ուժեղ), միջակ և թույլ տնտեսություններում: Կուլակային տնտեսության մեջ աշխատանքը պաշտպանությունը անց եւ

կացվում Աշխատանքի Որենսգրքի հիման վրա, իսկ միջակ ու թույլ տնտեսություններում «ժամանակավոր կառուների» հիման վրա:

Նույն կարգը գոյություն ունի նաև բատրակների սոցիալական ապահովագրության գործում, այսինքն վաստակը կորցնելու դեպքում նրանց ապահովվելու ժամանակ:

Հստ որենքի ֆարբիկանելը, գործարանները և վարձողները (աերերը) պարտավոր են իրենց բանվորների ու ծառայողների համար անեն ամիս վճարել Սոցապահնձարկղին ապահովագրական տոկոսներ։ Այդ տոկոսներից կաղմացում են հակայական դրամագլուխներ, վորոնք ծառայում են բանվորներին և ծառայողներին ոգնություն ցույց տալու համար, յերբ վերջիններս

հիվանդության կամ գործազրկության ժամանակ մնում են առանց յեկամուտի:

Յերբեմն կթվար, վոր այդ որենքը առանց դժվարությունների կարելի յեանցկացնել նաև գյուղում, բայց դուրս յեկավ, վոր այդ այնքան ել հեշտ չի:

Գործարանային բանվորները մեծ մասամբ կենտրոնացած են քսուաքներում և արդյունաբերական վայրերում, վորտեղ դժվար չեք հիմնել առանցվագրական դանձարկղներ և ընդգրկել բոլոր բանվորներին ու ծառայողներին։ Բատրակները ցըված են գյուղերում, առանձին մանր տնտեսությունների մեջ, այստեղ անհամեմատ դժվար ե վարձողներից (բատրակ պահողից) տոկոսներ ստանալը և կարիքի դեպքում բատրակին ոգնելը։ Բացի

գրանից միջակ և չքավոր գյուղացիական տնտեսությունները դեռ չեն կարողացել իրենց տնտեսությունը վերականգնել ավերածությունից ու գյուղացի վարձողները հաճախ չեն կարողանում վճարել ապահովագրական տոկոսներ՝ իրենց բատրակների համար։ Այդ պատճառով ել ապահովանձարկղները վերջին ժամանակներս ապահովում ենին գլխավորապես բանվորներին ու ծառայողներին, վորոնք աշխատում են քաղաքներում և արդյունաբերական վայրերում։ Ինչ վերաբերում ե գյուղի բատրակներին, Սոցապահնձարկղները նրանց համար ապահովագրական տոկոսներ մեծ մասամբ չեն գանձել և բատրակի յեկամուտը կորչելու դեպքում նրանց վոչ մի ոգնություն չեն ցուցց տվել։

1925 թվի գարնանը Խորհրդային իշխանությունը հաստատեց՝ գյուղացիական տնտեսություններում ոժանդակ վարձու աշխատանք կիրառելու պայմանների մասին «Ժամանակավոր կանոնները»։

Հստ այդ կանոնների բատրակների համար ապահովագրական տոկոսներ պարտավոր ելին մուծել միայն խոշոր գյուղացիական տնտեսությունները և այն տնտեսությունները, վորատեղ գյուղատնտեսական տարգա (դաշտային աշխատանքների սկզբեց մինչև վերջը) ընթացքում աշխատառում ելին Յ հոգուց վոչ պակաս բատրակներ։

Այդ անտեսությունների բանվորները (բատրակները) իրավունք ունելին սոցապահնձարկղներից ստանալու նույն ոգնությունը, ինչվոր ստանալու

(145) 13941-58

(15886-57)

եր գործարանային և այլ բանվոր ծառայողները:

Ինչ վերաբերում ե մասցած գյուղացիական տնտեսություններին, պետք ե ասել վոր որենքը ազատեց նրանց սոցազգանձարկղներին տոկոսներ մուծելուց, բայց պարտադրեց վարձողներին, վորպեսզի բատրակներին և բատրակուհիներին ցույց արվի ոգնություն՝ հիվանդության և ծննդաբերության դեպքում:

«Նոր կանոնները» հաստատվելու որվանից անցել ե 3 տարուց ավել:

Այդ ժամանակամիջոցում գյուղացիական տնտեսությունները զգալի չափով ուժեղացել և ամրապնդվել են: Ապդանձարկղները, վորոնք լրիվ չափով ընդգրկել են բանվորներին ու ծառայողներին սկսել են թափանցել նաև գյուղերը:

Ապահովագրական գանձարկղները այժմ ընդգրկել են միայն գյուղատնտեսական միության անդամներից արհետակցական միության անդամներից մեկ միլիոնից ավելի:

Այս բոլորը միասին հնարավորություն տվեցին Խորհրդային իշխանությանը որենք հրատարակելու գյուղիական տնտեսություններում զբաղված բատրակների ապահովագրության մասին: Հրատարակելով այդ որենքը Խորհրդային կառավարությունը ունեցոր և թույլ գյուղացիական տնտեսությունների նկատմամբ տարբեր մոտեցում ունեցավ և նրանց համար սահմանեց ապահովագրության տարբեր կանոններ:

Ինչպես ԵՇ Միջակ յեվ չխավոր ՏԱՏԵ-  
ԱՊԻՔՈՒՅՆԵՐԸ ապահովագրում իրենց  
բատրակներին

Ինչպես հայտնի յեւ գյուղում կան  
տարբեր խավի գյուղացիական տնտե-  
սություններ։ Դրանցից մի մասը ու-  
նեն քիչ հող և քիչ անասուն։ Այդ  
տնտեսությունները ստանում են շատ  
քիչ յեկամուտ, վորը հազիվ բավակա-  
նացնում են ընտանիքում կերակրվող-  
ներին։ Այդպիսի տնտեսությունները  
մշակվում են իրենց տիրոջ կամ նրա  
բարեկամների կողմից։ Միայն աշխա-  
տանքների ամենատաք շրջանում, այս-  
ինքն՝ հաց հավաքելու, խոտ հնձելու  
ժամանակ, իրենց ողնելու համար այդ  
գյուղացիները վարձում են բատրակ  
կամ բատրակուհի։

Յերբեմն վարձում են շատ քիչ ժա

մանակով։ Այդպիսի տնտեսությունն-  
երի կողմից բատրակների ապահովա-  
գրության համար կառավարությունը  
տվել ե հատուկ արտոնություններ  
(զիճումներ)։ Այդպիսի տնտեսությունն-  
երի համար բատրակների ապահովա-  
գրության տոկոսները սահմանված են  
ամենաքիչ չափով՝ լնդամենը  $3^{0}/0$ ,  
այսինքն ամեն մի բատրակի աշխա-  
տավարձի մեկ ոռություն համար 3 կոպէ  
(Որինակ, յեթե բատրակը ամսա-  
կան ստանում ե 10 ոռությի փո-  
ղով և 5 ոռությի մթերքով, տերը  
պարտավոր ե նրա համար Ապահովա-  
գրական Գանձարկղին վճարելու ամ-  
սական 45 կոպեկ)։ Բայց յեթե վար-  
ձողը չի ցանկանում կարող ե չվճարել  
այդ տոկոսները։ Այդպիսի տնտեսու-  
թյունների համար ապահովագրություն-

նը պարտադիր չի։ Բայց յեթե տերը չի վճարում ապահովագրական գանձարկղի տոկոսները և հանկարծ բարակը կամ բարբակուհին հիվանդանում ե, տերը պարտավոր ե վճարել նրան աշխատավարձ և տրամադրել ապաստարան ու ապրուստի միջոցներ՝ շաբաթից մինչև 1 ամիս ժամանակով։ Տերը պարտավոր ե նմանապես յերկու շաբաթից մինչև մեկ ամիս վճարել բարակուհուն աշխատավարձ, ապաստարան, և ապրուստի միջոց՝ վերջինիս կողմից յերեխա բերելու դեպքում։

Բացի դրանից, յեթե բարակի կամ բարակուհու հետ տեղի յե ունեցել դժբախտ պատահաբ (ձին քացով ե տվել, տրակտորը վիրավորել ե և այլն) և նա դարձել ե հաշմանդամ (ինվա-

լիդ), այդ դեպքում, տերը դատարանով պարտավոր ե վճարել նրան կեն սաթոշակ մինչև նրա կյանքի վերջը։ Իսկ յեթե բարբակը մահացել ե աշխատանքի ժամանակ պատահած դըժ-բախտ դեպքից, այն ժամանակ տերը պարտավոր ե վճարել կենսաթոշակ մահացածի այրուն (կնոջը) և վորբերին։

Իսկ յեթե տերը ապահովագրի իր բարբակներին այն ժամանակ հիվանդության կամ ծննդաբերության դեպքում աշխատավարձը, հաշմանդամացած բարբակի կամ մահացածի ընտանիքի կենսաթոշակը նա պարտավորված չի լինի վճարելու, այլ նրա փոխարեն այդ ամբողջը բարբակներին կվճարի Սոյալկանձարկղը։ Իհարկե պետք ե կարծել, վոր մի-

ջակները ու չքավորները կողտվեն նուու  
որենքից և կզերադասեն ապահովա-  
գրել իրենց բատրակներին, քան թե  
նրանց հիվանդության, հաշմանդամ  
դառնալու, կամ մահանալու դեպքում  
նրանց ընտանիքներին պահելու բեռը  
կվերցնեն իրենց վրա:

Ինչպես են ապահովագրում բատրակ-  
ներին կուլակային (ուժեղ) տնտեսու-  
թյունները

Բացի չքավոր և միջակ տնտեսու-  
թյուններից, ինչպես հայտնի յե զյու-  
ղում կան նաև այլ տնտեսություններ, այսինքն ավելի ուժեղ (կուլա-  
կային): Այդ տնտեսությունների թե  
հողն ե շատ և թե անասուններն ու  
կործիքները: Այդ տնտեսությունները  
ցանում են վոչ միայն իրենց համար,

այլ և վաճառելու համար: Ցանում են  
վոչ միայն հացահատիկ, այլ և կտավ  
ահատ, կանեփ բամբակ, ծխախոտ և  
այլ տեխնիկական բույսեր:

Այդ տնտեսություններինց շատե-  
րը անընդունակ են իրենց սեփական  
ուժերով մշակել հողը և ստիլված են  
մշտապես ոգտվել մեկ կամ յերկու  
բատրակի վարձու աշխատանքից:

Այդպիսի տնտեսությունների հա-  
մար բատրակների ապահովագրությու-  
նը պարտադիր ե, այսինքն տերերը  
պարտավոր են իրենց բատրակների  
համար ապահովագրական զանձարկղին  
վճարել տոկոսներ՝ անկախ նբանից,  
ուղում են նրանք այդ բանը թե վոչ:

Բայց որենքը այդպիսի տնտեսու-  
թյուններին ևս ավել ե մեծ արտոնու-  
թյուն: Քաղաքում մասնավոր անձանց

(վարձողների) մոտ աշխատող բանվորների համար ապահովագրական դանձարկղները գանձում են 16% ից վոչ պակաս, այսինքն աշխատավարձի ամեն մի ռուբլու համար 16 կոտեկ, իսկ գյուղի կուլակային տնտեսությունների համար սահմանված եւ ընդամենը 6%, այսինքն ամեն մի բարակի աշխատավարձի յուրաքանչյուր ռուբլու համար 6 կոտեկ (որինակ՝ յեթե բարակը ստանում ե 10 ռուբլի փողով և 5 ռուբլի մթերքով, այդ ժամանակ տերը պարտավոր ե Սոցազգանձարկղին վճարել ամսական 90 կոտեկ:)

Բայց ինչպես զիտենք գյուղում կան նաև վոչ պակաս թվով ուրիշ ավելի հարուստ դյուղացիներ, վորոնց մոտ այնքան շատ են ամեն տեսակի բարիքները (անասուն, գործիքներ և

այլն), վոր նրանք ստիպված են մշտապես պահել, վոչ թե մեկ-, երկու բատրակ այլ ավելի շատ: Այդ վարձողների մոտ բատրակները աշխատում են վոչ միայն աշխատանքների տաք ժամանակ, այլ և դաշտային աշխատանքների ամբողջ ընթացքում, իսկ յերբեմն ել ձմեռը: Այդ հարուստ գյուղացիների մեջ հաճախ լինում են այնպիսիները, վորոնք ունեն վոչ միայն հողագործական տնտեսություն այլ և ունեն սեփական առևտուր, ջրաղաց, ողու գործարան, ձիթահան գործարան և այլ նման ձեռնարկություններ, իսկ վորանք ել պարապում են անասունի, անտառի, բամբակի, վաճառքով:

Բոլոր այս խոշոր կուլակային տընտեկությունները պարտավոր են ան-

պատճառ ապահովագրելու իրենց բարակներին և նրանց համար ապահովագրական գանձարկղին վճարելու 10 տոկոս, այսինքն աշխատավարձի ամեն մեկ ոռություն հաժար 10 կոպեկ. (որինակ՝ յեթե բատրակը ստանում է 10 ոռութի փողով և 5 ոռութի մթերքով տերը պարտավոր են նրա համար ամսական վճարել 1 ո. 50 կ.),

Ինչպես են բարակներին ապահովագրում զյուղական կոլեկտիվ տնտեսությունները, արտելները յեկ համայնքները

Բացի առանձին վարձողների մոտ աշխատող բատրակներից, ինչպես գիտենք զյուղում կա նաև վարձու աշխատավորներին մի մեծ խումբ, վորը գլխավորապես աշխա-

տում ե զյուղական հասարակությունների մոտ։ Դրանք չոբաներն ու նախրապաններն են։ Աշխատավորների այդ խումբը նմանապես ապահովագրվում ե պարտադիր կարգով և նրանց համար հասարակությունը պարտավոր է Սոցապղանձարկղին մուծանքներ վճարել նույն ցածր չափով, այսինքն աշխատավարձի  $60\%_0$ -ը (ամեն մի ոռություն համար 6 կոպեկ),

Նույն չափով ( $60\%_0$ ) են իրենց բանվորների համար տոկոսներ վճարում զյուղի կողեկտիվ տնտեսությունները, ընկերությունները, արտելները և համայնքները։ Աղահովագրական Գանձարկղի տոկոսները բոլոր վարձողները պարտավոր են վճարել իրենց հաշվին առանց բատրակների վարձից պահպաններ կատարելու։

Ինչպես են նաև ում ապահովագրական տոկոսները

Յեթե բոլոր բատրակները ամեն տեղ ստանային միենույն աշխատավարձը, այդ դեպքում ամբողջ Խորհրդային Միության մեջ հնարավոր եր ապահովագրական զանձարկող տոկոսները վճարելու միենույն աշխատավարձի հաշվով։ Այն ժամանակ հնարավոր կիներ նախորդք ասել, ինչքան պետք եր իրեն աշխատավորի համար վճարի կուլակը, ինչքան միջակը՝ նիշքան չքավորը։

Բայց ինչպես գիտենք, նույնիսկ միենույն տիրոջ մոտ բատրակները ստանում են տարբեր վարձատրություն։ Դա մեծ մասամբ կախված է նրանից, թե բատրակը վարձված եր պարփակում ժամանակը, ամառը թե

ձմեռը։ Նույնպես նշանակություն ունի այն հանգամանքը թե բատրակը վորքան ժամանակով եր վարձված և այլն։ Շատ քիչ եր պատահում, վոր բատրակի աշխատավարձը վճարվի միայն փողով։ Մեծ մասամբ բատրակը բացի փողից ստանում եր վարձատրություն նաև մթերքով (ուտելեղեն), բնակարանով, հագուստեղենով և յերեմն ել բերքի վորոշ մասը։

Հստ որենքի ամեն մի վարձող, բատրակ վարձելիս պարտավոր եր նրա հետ պայմանագիր կնքել եր կնքվող պայմանագրի մեջ շեշտել, թե բատրակը վորքան եր ստանալու դրամով (փողով) և վորքան եր գնահատվում այն ամբողջը, ինչ վոր նա պարտավորվում եր վճարել բատրակին մթերքով։

Հենց այդ պատճառով ել Ապդանձ-

արկղին հասանելիք տոկոսները պետք  
ե գանձել վոչ միայն բատրակի ստաց-  
ված վարձատրության համար, այլ և  
այն գումարի համար, վորով գնահատ-  
ված ե բատրակի՝ ուտելիքը, հագուս-  
տը և այլն։ Յեթե որինակ՝ վարձող  
(բատրակ պահող) հովաննեսյանը պայ-  
մանագրով պարտավորվել է վճարելու  
բատրակ Ստեփանյանին ամսեկան 16  
ռուբլի ֆողով և կերակրելու նրան,  
իսկ կերակրելու արժեքը գնահատված  
է յեղել 8 ռուբլի, ապա ապահովա-  
գրական տոկոսները վարձողը պետք է  
վճարի վոչ թե 16 ռուբլու հաշվով,  
այլ 24 ռուբլու։ Միակ բանը, վոր ըստ  
որենքի չպետք ե պայմանագրով, վոր-  
պես դրամական վարձատրություն գնա-  
հատել և դրա համար ել ապահովա-  
գրական մուծանքներ (տոկոսներ)

չգանձել, դա այն բնակարանն ե, վոր-  
վարձողը տալիս ե բատրակին։  
Վորպեսզի վարձողները ամեն մի  
բատրակի համար ապահովագրական  
գանձարկղի հետ հաշիմներ անելիս  
ՀՀփոթվեն, Սոցիալական Ապահովա-  
գության Միութենական Խորհուրդը  
ըստ իրենց աշխատավարձի բատրակ-  
ներին բաժանել ե 7 խմբի և սահմա-  
նել ե յուբաքանչյուր խմբի համար  
ամսական այն միջին աշխատավարձը,  
վորի հաշվով պետք ե ապահովագրա-  
կան գանձարկղին տոկոսներ վճարվի։

Առաջին խմբին դասվում են այն  
բատրակները, վորոնք ամսեկան ստա-  
նում են փողով և մթերքով ընդա-  
մենը 12 ռուբլուց պակաս։

Յերկրորդ խմբին դասվում են

այն բատրակները, վորոնք ստանում  
են 13—18 ռ.:

Յերբորդ խմբին դասվում են այն,  
բատրակները, վորոնք ստանում են  
18—22 ռ.:

4. լդ խմբին դասվում են այն բատրակ-  
ները, վորոնք ստանում են 22—28 ռ.:

Հինգերբորդ խմբին դասվում են  
այն բատրակները, վորոնք ստանում  
են 27—32 ռ.:

Վեցերբորդ խմբին դասվում են  
այն բատրակները, վորոնք ստանում  
են 32—40 ռ. և վերջապես 7. լդ խմբին  
դասվում են այն բատրակները, վո-  
րոնք ստանում են ամսական 40 ռուբ.  
և 40 ռուբլուց բարձր:

Այն միջին աշխատավարձը, վորի  
համար պետք եւ գանձվի ապահովա-  
գրական մուծանքներ (տոկոսներ) վե-

բոհիշյալ Շ խմբի բատրակների համար  
կլինի հետեւյալը. —

1. լն խմբի բատրակի համար ամսակ. միջին աշխատավ.	ե 11 ռ.
2. լդ » » »	15 »
3. լդ » » »	20 »
4. լդ » » »	25 »
5. լդ » » »	29 »
6. լդ » » »	34 »
7. լդ » » »	41 »

Այդպիսով այն վարձողները, վո-  
րոնք որենքի համաձայն պարտա-  
վոր են Սոցազգանձարկղին վճարել 10  
տոկոս-կվճարեն՝

1.ին խմբի բատրակի համար	ու. կ.	
ամսական		1 10
2.ըդ » » »		1 50
3.ըդ » » »		2
4.ըդ » » »		2 50
5.ըդ » » »		2 90
6.ըդ » » »		3 40
7.ըդ » » »		4 10

Այն վարձողները վորոնք որենքի  
համաձայն Սոցալգանձարկղին պար-  
տավոր են վճարել 6 տոկոս, կվճարեն՝  
ու. կ.

1.ին խմբի բատրակի համար	—	66
2.ըդ » » »	—	90
3 ըդ » » »	1	20
4.ըդ » » »	1	50
5.ըդ » » »	1	74
6.ըդ » » »	2	04
7 ըդ » » »	2	46

Իսկ ինչ վերաբերվում ե այն վար-  
ձողներին վորոնք համաձայն որեն-  
քի իրենց բատրակներին ապահովա-  
գրում են կամավոր կերպով և Սոցապ-  
գանձարկղին վճարում են ապահովա-  
գրական տոկոսներ (մուծանքներ) 3  
տոկոս, այդպիսիները կվճարեն՝

ու. կ.	
1.ին խմբի բատրակի համար	— 33
2.ըդ » » »	— 45
3 ըդ » » »	— 60
4 ըդ » » »	— 75
5 ըդ » » »	— 87
6.ըդ » » »	1 02
7 ըդ » » »	1 23

Ով ե գանձում ապահովագրական  
մուծանեմները (տոկոսները)  
Վարձողները, իրենց բատրակ-  
ների համար մուծանքները (տոկոս-

ներ), պարտավոր են վճարել Սոցազգանձարկղին։ Բայց գնալ քաղաք իրենց բատրակների համար ապահովագրական մուծանքները վճարել, վարձողների համար դժվար կլիներ։ Այդ դեպքում հենց քաղաք գնալու ճանապարհածախսը ավել կնստեր ապահովագրական մուծանքների փողից։

Այդ պատճառով ել Սոցազգանձարկղները պետք ե գործը այնպես կազմակերպեն, վորպեսզի զյուղացին ինչ վոր ապահովագրական տոկոսներ ե իրենց հասնում վճարի հենց իրենց գյուղում։

Դրա համար ել, բոլոր այն գյուղերում, վորտեղ կան մեծ թվով բատրակներ պետք ե բաց անել Սոցազգանձարկղի բաժննմունքներ, յեթե այդ հնա-

բավար չի պետք ե ունենալ Սոցապ. լիազոր։ Յեթե Սոցապգանձարկղը ոկտում ե գյուղում անցկացնել բատրակների ապահովագրության որենքը, նա անպատճառ պետք ե հայտարարի, թե որենքի համաձայն ով պարտավոր ե ապահովագրելու իր բատրակներին։ Բացի դրանից Սոցապգանձարկղը պետք ե հայտնի, թե վորտեղ պետք ե ներկայանան վարձողները (բատրակ պահողները), բատրակներին Սոցապգանձ. ցուցակագրելու համար։ Ամեն մի վարձող (բատրակ պահող), վորը ըստ որենքի պարտավոր ե իր բատրակներին ապահովագրել, պետք ե այդ մասին հայտնի Սոցապ. լիազորին։ Սոցապգանձարկղի լիազորը նրանց ամեն մեկին կտա մի թերթիկ, վորի մեջ գրված կլինի թե նա իր բատրակների համար

ինչքան վող և վորտեղ պետք եւ վճարի:  
 Իսկ ինչ վերաբերվում եւ այն չքա-  
 վոր անտեսություններին, վորոնք ու-  
 ղում են ապահովագրել իրենց բատ-  
 րակներին կամավոր կերպով, պետք ե  
 ներկայանան Սոցապ. լիազորին և կըն-  
 քեն նրա հետ ապահովագրության  
 մասին պայմանագիր:

Այդ պայմանագրի մեջ պետք ե  
 գրված լինի թե վարձողը վոր ժամա-  
 նակից մինչև վոր ժամանակն ե պար-  
 տավորվում Սոցապանձարկղին մուշ-  
 տանքներ (տոկոսներ) վճարելու:

Բատրակների համար Սոցապան-  
 ձարկղին հասանելիք մուժանքները  
 (տոկոսները) պետք եւ վճարվի ամեն  
 ամիս, յեթե վարձողը (բատրակ պա-  
 հողը) Սոցապանձարկղին իր տոկոս-  
 ները ժանանակին չվճարի, այդ դեպ-

քում Սոցապանձարկղը այդ տոկոսնե-  
 րը իրավունք ունի գանձելու հարկա-  
 դրական կարգով, այնպես ինչպես  
 գանձվում են հարկերն ու տուրքերը:

Վարձողը (բատրակ պահողը), յեթե  
 որենքով պետք ե վճարի կամ կամա-  
 վոր պայմանագրի միջոցով պարտա-  
 վորվել ե վճարելու Սոցապանձարկղին  
 տոկոսներ, պետք ե վոր նա իր պարտքը  
 կատարի: Մենք արդեն ասացինք, վոր  
 այն վարձողները (բատրակ պահողնե-  
 րը), վորոնք որենքի համաձայն պար-  
 տավոր են ապահովագրել իրենց բատ-  
 րակներին, այդ մասին պետք ե հայտ-  
 նեն Սոցապ. լիազորին: Հենց նույն  
 ձևովելնրանք պարտավոր ե հայտնելու  
 Սոցապ. լիազորին նոր վարձված բատ-  
 րակի մասին, վորպեսզի Սոցապ. լիա-  
 զորին

զորը կարողանա այդ նոր բատրակի համար ել առկոսներ գանձել:

Վորպեսզի վարձողները Սոցապ-  
գանձարկղից չթագցնեն թե իրենց մոտ  
ինչքան բատրակ ե աշխատում, որեն-  
քը Սոցապգանձարկղին իրավունք ե  
տվել քրեական պատասխանատվու-  
թյան յենթարկելու այն վարձողներին,  
վորոնք փախչում են տոմարագրու-  
թյունից, կամ տալիս են Սոցապգան-  
ձարկղին սիսալ տեղեկություններ՝  
բատրակների թվի, նրանց աշխատա-  
վարձի մասին և այլն:

Ինչպիսի ոգնություն են սահում  
բատրակները նոր որենքով

Այն բոլոր ապահովագրական մու-  
ծանքները (առկոսները), վորոնք հա-  
վաքվում են և կհավաքվեն գյուղա-

յիական տնտեսություններից, ծառա-  
յելու յեն բատրակներին ոգնություն  
ցույց տալու գործին՝ յերբ վերջին  
ներս կորցնում են իրենց աշխատա-  
վարձը:

Այդ ոգնությունը տրվելու յե հենց  
այն Սոցապգանձարկղի լիազորի մի-  
ջոցով, վորը հավաքում ե այդ մու-  
ծանքները (առկոսները):

Հստ այն կանոնների, վորը հաս-  
տատել ե Սոցիալական Ապահովագրու-  
թյան Միութենական Խորհուրդը, ա-  
պահովագրված բատրակը և բատրա-  
կունին կարող են ստանալ՝

հիվանդության ժամանակ նպաստ:

Հղիության և ծննդաբերության  
ժամանակ նպաստ:

Յերեխա ծնվելու ժամանակ նպաստ:

Գործազրկության ժամանակ նը-  
պաստ:

Հաշմանդամ դառնալու դեպքում  
կենսաթոշակ:

Թաղման համար նպաստ:

Նեցուկը (կերակրողը) կորցնելու  
դեպքում կենսաթոշակ:

Բժշկական ոգնություն:

Բացի դրանից բատրակի կամ բատ-  
րակունու ընտանիքները իրավունք ու-  
նեն իրենց նեցուկի (կերակրողի) թաղ-  
ման նպաստներ ստանալ և նեցուկի  
մահանալու դեպքում կենսաթոշակ  
ստանալ:

Վորպեսզի իմանաք թե ում և ինչ  
դեպքում ե վճարվում այս կամ այն  
նպաստը հարկավոր ե գտնել ու կար-  
դալ այս գրքի այն գլուխը, վորտեղ  
վոր խոսվում ե այդ նպաստի մասին:

Նպաստներ նիվանդության դեպքում

Հիվանդության դեպքում նպաստ-  
ներ վճարվում են բոլոր ապահովա-  
գրված բատրակներին և բատրակուների-  
ներին: Այդ նպաստները վճարվում են  
ամեն տեսակի հիվանդությունների  
ժամանակ—ինչից վոր ուզում ե այդ  
հիվանդությունը առաջացած լինի:

Քանի վոր աշխատավորը հիվան-  
դացել ե և բժշկի կամ բուժակի  
թույլտվությամբ հիվանդության պատ-  
ճառով չի աշխատել, ապահովագրա-  
կան գանձարկը պարտավոր ե վճա-  
րել նրան նպաստ: Բայց յեթե բատ-  
րակը հիվանդացել ե հարբեցողության  
հետևանքով և հիվանդությունը տեսել  
ե Յ որից վոչ ավել, այդպիսի հիվան-  
դության համար Սոցապանձարկը  
նպաստ չպիտի տա:

Բատրակի հիվանդանալու դեպ-  
քում նպաստը տրվում է հիվանդու-  
թյան առաջին որվանից՝ հիվանդու-  
թյան այն բոլոր որերի համար, վորոնց  
ընթացքում բատրակը չի աշխատել:  
Նպաստը տրվում է մինչև այն  
ժամ մինչև վոր բժիշկները կապահա,  
նրան անբուժելի հաշմանդամ (ինվա-  
լիդ):

Ինչպես մենք սկզբում ասացինք  
բատրակների համար ապահովագրական  
մուծանքների չափը վորոշված եւ շատ  
ցածր և ապահովագրական գանձար-  
բին, ամբողջ նրանց հիվանդության  
ժամանակ ոգնություն ցույց տալ: Այդ  
պատճառով ել Սոցիալական Ապահո-  
վագրության Միութենական Խորհուր-

դը վորոշեց նպաստ տալ 26 շաբաթից  
վոչ ավելի այն բատրակներին, վո-  
րոնք ապահովագրված են պարտադիր  
կարգով: Իսկ կամավոր սկզբունքով  
ապահովագրված բատրակներին պետք  
են նպաստ տալ 13 շաբաթից վոչ ա-  
վել: Յեթե հիվանդությունը առաջա-  
ցել ե աշխատանքի ժամանակ դժբախտ  
պատճառ տեղի ունենալու հետևան-  
քով, այդ դեպքում նպաստը տրվում  
ե 13 և 26 շաբաթն անցնելուց հե-  
տո յել այսինքն, մինչև հիվանդը առող-  
ջանա, կամ հաշմանդամ ճանաչվի: Այդ  
նպաստը վճարվում է հիվանդության  
բոլոր որերի համար՝ նաև հաշվելով  
տոն և կիրակի օրերը: 33 բդ յերեսում  
մենք ցույց տվեցինք, վոր Սոցալ-  
գանձարկների մուծանքները վճար-  
վում են վոչ թե այն աշխատավարձի  
հաշվով վորը իսկապես ստանում է

այս կամ այն բատրակը,	այլ այն	
խմբերի միջին աշխատավարձի հաշ-		
վով վարոնց մասին մենք պատմեցինք		
35 թղ, 36 թղ և 37. թղ յերեսներում:		
Նույնպես և հիվանդության նպաս-		
տը արգում եւ աարբեր չափերով՝ այ-		
1. ին խմբի բատրակին ամեն մի		
հիվանդության որվա համար	կ.	
վճարվում եւ		4.
2. թղ	»	25
3. թղ	»	35
4. թղ	»	45
5. թղ	»	55
6. թղ	»	65
7. թղ	»	75
Որինակի համար ասենք թե հի-		
վանդացել եւ բատրակ հովհաննեսյանը,		
վորը ստանում եր 10 ոռութիւն փողով,		
5 ոռութիւն մթերքով և 3 ոռութիւն յել		

հակուստով, ուրեմն ընդամենը ամսա-

կան 18 ոռութիւն: Այդ բատրակը հիվանդ

պարկել եւ ամբողջ մայիս ամիսը, վո-

րը 30 որ եւ:

Ըստ իր աշխատավարձի ինչպես այդ

յերեսում ե35-թղ յերեսում մեր պատմա-

ծից, բատրակ բատրակ հովհաննեսյանը

դասվում ե 3-թղ խմբին, նրա որեկան

նպաստը կլինի 45 կոպեկ: Այդպիսով

հովհաննեսյանին կտրվի ( $45 \times 31$ ) ըն-

դամենը 13 որ 95 կ.:

Յերբ բատրակը հիվանդանում ե,

նա պետք ե դիմի բժշկին, կամ բու-

ժարան գնա, իսկ այն վայրերում,

վրատեղ բժիշկներ չկան պետք ե գնա

մոտակա բուժակայանը: Այդտեղ նը-

բան ցույց կտան բժշկական ոգնու-

թյուն և յեթե բժիշկը (կամ բուժակը)

գտնի, վոր բատրակը հիվանդության

պատճառով չի կարող աշխատել, հիվանդին կտա հիվանդանոցային թերթիկ: Հիվանդանոցային թերթիկի մեջ բժիշկը (բուժակը) կզրի թե վոր որվանից հիվանդը չի կարողանում աշխատել: Այդ հիվանդանոցային թերթիկը ամեն ժամանակ բժիշկի (բուժակի) մոտ գնալիս պետք են ներկարացնել նրան: Յեթե հիվանդությունը տեսել ե 2 շաբաթից պակաս, բատրակը պետք ե առողջանարուց հետո հիվանդանոցային թերթիկը իր աշխատանքային պայմանագրի (կամ հաշվեգրքույշի) հետ միասին ներկայացնի Սոցապահարկղի լիազորին և ստանա իր նպաստը:

Իսկ յեթե հիվանդությունը տեսում ե 2 շաբաթից ավել, հիվանդը կարող ե նպաստը ստանալ ամեն յերկու շա-

բաթը մեկ անգամ, իսկ հին հիվանդանոցային թերթիկի փոխարեն լիազորից կտրող ե ստանալ նորը:

Այն հիվանդը, վորը Սոցապահանձարկղից ստանում ե նպաստ պարտավոր ե ճշտությամբ կատարել բժշկի բոլոր պատվերները և չանել այնպիսի բաներ, վոր նրա բժշկությանը խանդարի:

Յեթե որինակ բժիշկը արգելել ե հիվանդին աշխատել, իսկ նա չի լսում և աշխատում ե, այդ դեպքում Սոցապահանձարկղի լիազորը կարող ե զրկել նրան նպաստից: Կամ յեթե բժիշկը պատվիրել ե հիվանդին անկողնու մեջ պատվիրել, իսկ նա հիվանդության ժամանակ փողոցներն ե չափչփում, այդ դեպքում ևս լիազորը կարող ե զրկել այդպիսի հիվանդին նպաստից:

Նպաստ ստանալու համար հիվանդանոցային թերթիկը պետք է լիազորին հանձնել վոչ ուշ քան առողջանալուց 6 ամիս հետո։ 6 ամսից ավելի ուշ ներկայացրած թերթիկով Սոցագանձարկղը նպաստ չի վճարում։

Նպաստներ հղիուրյան յեվ ծննդաբերուրյան դեպքում

Գյուղում քիչ չի պատահում, վոր հղի բարբակուհին աշխատում ե մինչև հղիության վերջին որերը, իսկ յերեմն ել ծնում ե (ազատվում ե) դաշըռում, Ծնելով յերեխա, դեռ ծննդաբեսկությունից չառողջացած նա նորից յեռնենում համարյա ծննդաբերությունից մի քանի որ հետո։

Մինչեռ գիտնականները դեռ վա-

կուց հաստատել են, վոր հղիության վերջին ամիսներում և ծննդաբերությունից հետո—սկզբի ամիսներին, ծանըր աշխատանքը շատ զիաս է վոչ միայն մոր այլև յերեխայի համար։

Այդ պատճառով ել Խորհրդային Իշխանությունը նոր որենքով պարտադրել ե վարձողներին (բարբակ պահողներին) իրենց մոտ աշխատող բարբակուհիներին մինչև ծննդաբերությունը 4 շաբաթ առաջ և ծննդաբերությունից 4 շաբաթ հետո (ընդամենը 8 շաբաթ) աշխատանքից ազատելու։ Այդ ամբողջ ժամանակամիջոցի համար Սոցագանձարկղը տալիս ե բարբակունուն նպաստ նպաստի չափերը այս դեպքում լինում են նույնը ինչվոր հիվանդության դեպքումն եր։

Բայց յեթե Սոցագանձարկղը

պարտավորված լիներ վճարելու ամեն  
մի բառը կուհուն հղիության և ծնն-  
դաբերության դեպքում 8 շաբաթվա-  
նապաստ, այդ դեպքում ամեն մի դյու-  
դացի հզի կին մի որով կվարձվեր ու-  
րիշ գյուղացու մոտ, վորպես բատրա-  
կուհի, վորպեսզի կարողանար հղիու-  
թյան նպաստ ստանալ: Յեթե այդ  
բանը թույլատրվեր, այդ դեպքում  
վոչ մի դրամագլուխ չեր հերիք անի  
դրանց բոլորին բավարարելու համար:

Դրա համար ել Սոցիալական Ա-  
պահովագրության Միութենական Խոր-  
հուրդը վորոշել ե, վորպեսզի հղիու-  
թյան և ծննդաբերության նպաստ  
արվի միայն այն բատրակուհիներին,  
վորոնք վերջին յերկու տարվա ըն-  
տարել: Մինչև հղիության 9.րդ ա-

միսը, հզի կինը վարձով պիտի աշխա-  
տած լինի 6 ամսից վոչ պակաս:

Որինակ՝ յեթե բատրակուհին պի-  
տի ծնի (ազատվի) 1929 թ. սգոստո-  
սի 1 ին, այդ դեպքում նա նպաստ  
կտանա, յեթե 2 տարվա ընթացքում  
մինչև 1929 թ. հուլիսի 1-ը (այսինքն՝  
մինչև ծննդաբերության 9.րդ ամիսը)  
աշխատել ե կես տարուց վոչ պակաս:

Հղիության պատճառով արձակուրդ  
ստանալու համար, բատրակուհին պի-  
տի դիմի բժշկին, կամ ամբուլատոր-  
իային (բուժաբան), իսկ այն տեղե-  
րում, վորածեղ բժիշկներ չկան, պիտի  
դիմի մոտակա բուժակայանին: Յեթե  
բժիշկը (կամ բուժակը) տեսնի, վոր  
մինչև ծնունդը մնացել ե 4 շաբաթ,  
կտա հիվանդանոցային թերթիկ, վորի  
մեջ կնշանակի թե յերբ ե ծննդաբե-

բությունը լինելու։ Հղիության նպաստ  
ստանալու ժամանակ, բատրակունին  
Սոցազգանձարկղի լիազորին պիտի  
ներկայացնի այդ հիվանդանոցային  
թերթիկը՝ իր աշխատանքային պայմա-  
նագրի (կամ հաշվեդրքույլի) հետ  
միասին։

Բացի դրանից նա պետք է ներ-  
կայացնի վորեիցե փաստաթուղթ, վո-  
րեց յերեար, վոր նա վերջին յերկու  
և 6 ամիս։ Այդ դեպքում, վորպես  
փաստաթուղթ կարող են ծառայել հին  
պայմանագրերը կամ հաշվեդրքույլ.  
ները, պրոֆմիության գրքույլը և այլն։

Ծննդաբերությունից հետո բատ-  
րակունին պետք է ներկայացնի Սո-  
ցազգանձարկղի լիազորին փաստա-  
թուղթ, վոր նա ծնել և (ազատվել ե)։

Այդ փաստաթուղթն ե լինելու կամ  
հիվանդանոցի աեղեկանքը (վորսեղ  
նա ազատվել ե), և կամ Զագորի վկա-  
յականը յերեխայի ծննդյան մասին։  
Հղիության և ծննդաբերության  
նպաստը պետք է ստանալ ծննդաբե-  
րության որից 7 տասից վճռ ուշ, հա-  
կառակ գերազում Սոցազգանձարկղը  
նպաստը չի վճարի։

Բացի հղիության և ծննդաբերու-  
թյան նպաստից, վորի մասին մենք  
խոսեցինք վերեւում, Սոցազգանձարկղը  
պարտավոր է ծննդկան բատրակու-  
նուն վճարելու առանձին նպաստ յե-  
րեխային ոժիտ (հագուստ, իրեր) գնե-  
լու համար։ Այդ նպաստը արվում է  
բոլոր այն բատրակունիներին, վորոնք

իրավունք ունեն հղիության և ծննդա-  
բերության նպաստ ստանալու, այսինքն  
նրանց, վորոնք վերջին 2 տարվա ըն-  
թացքում վարձով աշխատել են 6 ամ-  
սից վոչ պակաս։ Այդ նպաստը բառ-  
բակուհուն՝ ամբողջ Խորհրդային Միու-  
թյան մեջ վճարվում են՝ ամեն մի նո-  
րածին յերեխայի համար 10 սուբլի,  
այսինքն, անկախ նրանցից թե այդ  
